ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցիչ՝.....Մակարյան Անուշ Վալիկոյի

Ղեկավար՝ .....Սարգսյան Շողիկ /մանկ. գիտ. թեկ. դոցենտ/

2023

Համառոտագիր

Բառակազմական հմտությունները, որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց:

Աշխատանքում ներկայացրել ենք բառակազմական գիտելիքների մասին ուսուցման ձևեր, վարժությունների համակարգ: Ներկայացրել ենք մեթոդներ, որոնցով հարստանում է կրտսեր դպրոցականի բառապաշարը:

Տվել ենք հոմանիշների, հականիշների, դարձվածքների և բառակազմական գիտելիքների ուսուցումը, որպես բառապաշարի հարստացման միջոցի ձևեր:

Ներկայացրել ենք նաև ժամանակակից մեթոդներով դասի շնորհանդես:

Բովանդակություն

Ներածություն....4

ԳԼՈՒԽ 1-ԻՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

1.1.Բառապաշարի հարստացման նպատակն ու խնդիրները....7

1.2. Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացում 12

1.3. Ըստ ձևի և իմաստի տարբերակված բառերի դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործում 16

ԳԼՈՒԽ 2-ՐԴ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ....23

2.1.Բառապաշարի հարստացումը հոմանիշների, հականիշների, դարձվածքների միջոցով....23

2.2. Բառապաշարի հարստացումը քերականական վարժությունների միջոցով....25

2.3.Հետազոտական աշխատանք (դասի պլան)....30

Եզրակացություն 44

Օգտագործված գրականության ցանկ 47

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Տարրական դասարանների աշակերտների մեջ կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորումը խիստ բազմաբնույթ ու համակողմանի աշխատանք է , որն իր մեջ ընդգրկում է լեզվի ուսուցման գրեթե բոլոր բնագավառները՝ և՛ ընթերցանության դասերին սովորած բառերն ու արտահայտությունները, և՛ թե լեզվական նյութի ու ուղղագրության ընթացքում յուրացրած կանոններն իրենց արտացոլումը գտնում են կապակցված խոսքի մեջ:

Բառային աշխատանքն ունի իրականացման փուլեր՝ բառի բացատրում, հոմանիշների հականիշների հայտնաբերում , խոսքի մեջ այդ բառերի օգտագործումը: Մայրենիի դասագրքերում տեղ գտած բոլոր բնագրերում կան նոր բառեր :Սակայն հաճախ որոշ բառերի իմաստը մատչելի չէ երեխաներին: Ուսուցիչը պետք է բացատրի անծանոթ բառերը, նկարագրի այն, ասի այդ բառերի հոմանիշներն ու հականիշները: Բնագրում հանդիպում են նաև բառեր, որոնք աշակերտներին ծանոթ են նախկինում անցած ստեղծագործություններից, սակայն դեռևս ակտիվ բառապաշար չեն մտել: Նման բառերի հետ անհրաժեշտ է կատարել այնպիսի աշխատանքներ, որ երեխաները կարողանան դրանք օգտագործել իրենց բանավոր և գրավոր խոսքում: Այդ բառերը պետք գրել բառատետրում, անընդհատ կրկնել, գրել բացատրությունը, ասել հոմանիշը, կազմել բառակապակցություններ և գործածել նախադասությունների մեջ, որպեսզի այդ բառերը դառնան աշակերտների սեփականությունը: Աշակերտի բառապաշարը հարստացնելու, լեզուն ճոխացնելու և գեղեցկացնելու համար պետք է նախ նրա միտքը հարստացնել համապատասխան ընկալումներով ու պատկերացումներով:

Մենք կարծում ենք, որ մայրենի դասի հիմնական պահերից մեկը բառային աշխատանքն է և կարևոր է այն թե՛ աշակերտի բառապաշարի հարստացման, թե՛ կարդացածի միտքը ճիշտ ընկալելու համար :

Այս թեմայի ուսումնասիրումն ապագա ուսուցիչների համար կարևոր նշանակություն ունի, այն տալիս է տեսական և գործնական գիտելիքներ:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բառակազմական հմտությունները, որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոց:

Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել բառապաշարի հարստացման նպատակն ու խնդիրները
- Պարզաբանել կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման կարևորությունը
- Ներկայացնել ըստ ձևի և տարբերակված բառերի դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործում:
- Ներկայացնել բառապաշարի հարստացումը, հոմանիշների, հականիշների, դարձվածքների միջոցով:
- Ներկայացնել բառապաշարի հարստացումը քերականական վարժությունների միջոցով:
- Կատարել հետազոտություն և այն ներկայացնել դասի պլանի տեսքով

Աշխատանքի իրականացման համար նախատեսված հետազոտական մեթոդներն են՝ համադրման, վերլուծության, նկարագրման:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, իրենց համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը կազմված է երեք ենթագլխից: Այս գլխում խոսվում է բառակազմական հմտությունների դերի և նշանակության մասին, որը էական ու կարևոր դեր ունի կրտսեր դպրոցականի ինքնակատարելագործման գործում: Ներկայացված է բառապաշարի հարստացման հասկացությունը, նպատակն ու խնդիրները: Այս գլխում խոսվում է ըստ ձևի և իմաստի տարբերակված բառերի դերի մասին, որը նպաստում է կրտսեր դպրոցականի բառապաշար հարստացմանը:

Երկրորդ գլխում խոսվում է հոմանիշների և հականիշների, դարձվածնքների ու ասացվածքների ուսուցման առանձնահատկությունները տարրական դպրոցում, կատարված է հետազոտություն, որը ներկայացված է դասի պլանի տեսքով:

Ավարտվում է եզրակացությամբ, որտեղ համառոտ մեկնաբանված է ամբողջ աշխատանքը: Աշխատանքը բաղկացած է 45 էջից:

ԳԼՈՒԽ 1 ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1.Բառապաշարի հարստացման նպատակն ու խնդիրները

Բառերն ապրում են ո՛չ բառարաններում, ո՛չ էլ գրքերում: Բառերի կյանքը գործածության մեջ է: Լեզուն մտածողություն լինելով՝ նաև գործիք է, իսկ այդ գործիքն ապրում է բանելիս և բանելով, հակառակ դեպքում փտում է կամ ժանգոտում:

Պարույր Սևակ

Լեզվի հիմքը կազմում են բառերը, որոնք հանդիսանում են լեզվի միավորներ և մասկացում են հաղորդակցման պրոցեսին: Եթե հաղորդակցման համար կարևոր նշանակություն ունի բառը, ապա խոսքի զարգացման համար՝ բառապարաշարի հարստացումը:

Որքան հարուստ է աշակերտի բառապաշարը, այնքան զարգացած է նրա խոսքը: Ուստի, բառապաշարի հարստացումը, որպես խոսքի զարգացման հիմնական միջոց, հայոց լեզվի դպրոցական դասընթացի առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ուսուցիչն իր ամենօրյա աշխատանքներով աստիճանաբար ընդլայնում է աշակերտի բառապաշարը, մշակում նրանց մեջ ինչպես սեփական, այնպես էլ ուրիշներ մտքերը:

Աշակերտների բառապաշարի հարստացումը կրտսեր դպրոցում ունի ճանաչողական մեծ նշանակություն, քանի որ օբյեկտիվ աշխարհի իրերն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով:

Բառերը իրենց հնչյունական կազմով ու իմաստով մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրև այդ օբյեկտիվ իրականության առարկաներ ու երևույթների փոխարինողներ: Այն, ինչ որ մեզանից անկախ և մեզանից դուրս գոյություն ունի իբրև իր,առարկա, երևույթ և այլն, մեր գիտակցության մեջ հանդես է գալիս որպես այդ իրին,առարկային կամ երևույթին փոխարինող բառի նյութական իմաստ[1]:

Բառապաշարի հարստացումը հաջող կազմակերպելու համար ուսուցիչն առաջին հերթին պետք է բացատրի բառի նշանակությունը: Աշակերտները պիտի իմանան, որ բառը ինքնուրույն միավոր է և իր հնչյունական կազմով ու իմաստով հիմնականում մատնանշում է օբյեկտիվ իրականության այս կամ այն առարկան ու երևույթը, այսինքն՝ արտահայտում է առարկայի, նրա զանազան հատկանիշների իմաստ: Բառեր արտահայտած այդ իմաստն ընդհանուր, վերացական հասկացություն է, այսինքն՝ նա չի մատնանշում որևէ առարկա կոնկրետ կերպով:

[1] Աղայան Է. Բ., Լեզվականության ներածություն, Երևան,1963, ԵՊՀ հր., էջ 242

Լեզվի մեջ կա միայն ընդհանուրը, օրինակ, երբ ասում ենք տուն, դպրոց, խնձոր, հասկանում ենք իրականության մեջ գտնվող տուն, դպրոց կամ խնձոր ընդհանրապես: Բոլոր տեսակի խնձորները մենք անվանում ենք խնձոր՝ լինի դա մեծ թե՛ փոքր, կարմիր թե՛ դեղին, թե՛ քաղցր, թե՛ թթու;

Ամեն անգամ, երբ լսում ենք որևէ բառ, անմիջապես պատկերացնում ենք այն առարկան, որն արտահայտում ենք տվյալ բառով:

Երբ տեսնում ենք որևէ առարկա, մեր գիտակցության մեջ արթնանում է այդ առարկայի անվանումը:

Հայոց լեզվում կան շատ բառեր, որոնց տակ հասկացվող իրերն ու երևույթները չունեն իրենց որոշակի ձևը, կշիռը, ծավալը, այսինքն շոշափելի չեն, ինչպես՝ հրաշք, հիասքանչ, կայծակ և այլն:

Նման բառերը ավելի շատ խոսքի մեջ կարող են ստանալ իրենց կոնկրետությունը: Այստեղից հետևում է, որ բառն իր նշանակությամբ ունի երկու կողմ՝ բառիմաստ և առարկայական վերաբերություն:

Բառապաշարի հարստացման համար բառերը պետք է դիտել առավելապես խոսքի և այլ բառերի հետ ունեցած կապակցության մեջ: Փորձը ցույց է տալիս, որ հայոց լեզվի ուսուցման ընթացքում վարժությունների մեծ մասը կատարվում է առանձին բառերի շուրջ, բացակայում է կապակցված խոսքը, որոշակի կոնտեքստը: Կապակցված խոսքը ամփոփ միտք արտահայտող փոքրիկ տեքստը լայն հնարավորություն է ընձեռում բառիմաստը ճիշտ ու լրիվ բացահայտելու, բառի բազմիմաստությունն ու փոխաբերական առումները ըմբռնելու, հետևաբար և արդեն ծանոթ բառերը վերաիմաստավորելու, դրանք սեփական խոսքում տեղին գործածելու:

Աշակերտների բառապաշարը հարստեցնելու համար պետք է հաշվի առնել կարևոր հանգամանք՝ լեզվի բառային կազմի մեջ մտնող բառերը վերաբերում են տարբեր բնագավառների և ըստ դրանց էլ կարող են խմբավորվել և կազմվել իմաստային դաշտեր, որոնք դրսևորվում են իրական կյանքի մանրաշխարներ[2]:

Մեթոդական գրականության մեջ սովորաբար ընդունվում է բառի և պատկերացումների ըմբռնման չորս փոխհարաբերություն՝

[2] Ղարիբյան Ա., Հայ մանկավարժական լեզվաբանության հարցեր, երևան, 1969,ԳԱԱ հր., էջ 111:

1. Կա առարկայի ու երևույթի պատկերացումը, կա նաև դրանց անվանումը (տուն, եղբայր, անձրև, փոթորկ)
2. Չկա պատկերացումը, չկա և բառը (աերոլիթ, արիերգարս, գեհեն)
3. Կա պատկերացումը, բայց չկա այն անվանելու համար համապատասխան բառը (միրաժ, աղջամուղջ, ադամամութ)
4. Չկա պատկերացումը, բայց աշակերտի բառապաշարում կա բառը (հղփանալ, այլասերված և այլն)

Ռուս մեթոդիստ Բարանովը աշակերտների բառապաշարի հարստացման համար կարևոր է համարում վերջին երեք դեպքերը[3]: Դա պարզաբանելու համար ուսուցիչը կարող է տալ անծանոթ տեքստ և համապատասխան հարցեր ու պահանջներ առաջադրել, ասենք՝ ինչ բառեր են քեզ համար անհասկանալի, բացատրիր այսինչ բառի իմաստը, այդ բառն օգտագործիր սեփական խոսքում և այլն: Այդ դեպքում պարզ է, որ աշակերտը ոչ բոլոր անծանոթ բառերն է նկատում: Ուսուցիչը հարցնում է հենց չիմացած բառերի բացատրությունը»:

Միջին տարիքի դպրոցականը տիրապետում է լեզվի բառային կազմի մի մասին միայն, որն էլ կոչվում է բառապաշար: Այդ բառապաշարն ունի անհատական բնույթ և բաժանվում է երկու կարգի՝ գործուն և ոչ գործուն, այսինքն ակտիվ ու պասիվ:

Գործուն են աշակերտի բառապաշարի մեջ մտնող այն բառերը, որոնք աշակերտը ցանկացած ժամանակ, ազատորեն ու տեղին գործածում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում:

Ոչ գործուն բառապաշարի մեջ մտնող բառերն ընդհանրապես հասկանալի են աշակերտին, սակայն սեփական խոսքում սակավ են կամ գրեթե չեն գործածվում:

Աշակերտի գործուն բառապաշարի հարստացումը արդյունավետ ու նպատակասլաց դարձնելու համար ուսուցիչը հաշվի է առնում տվյալ դասարանում սովորողների տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները, նրանց անհատականությունը, անձնական հակումներն ու ձգտումները:

Ուսուցչի խնդիրն է իր ամենօրյա գործունեությամբ զարգացնել աշակերտի իմացական հետաքրքրությունը, դաստիարակել ուշադրություն յուրաքանչյուր նոր հանդիպած բառի նկատմամբ, սիրել տալ բառը, սովորեցնել նկատելու անծանոթ

[3] Баранов М. Т. Повышение эффективности славарной работы Пути созершенстаоания преподавания русского языка в 5-8 классаь, М.1962, стр 159.

բառը, ստուգել բառի ուղղագրության ու իմաստի ճշտությունը, սեփական նախաձեռնությամբ դիմել ուսուցչին՝ անհրաժեշտ բառը բացատրելու համար:

Դասավանդման պրակտիկայում երբեմն նկատվում են այնպիսի դեպքեր, երբ աշակերտը անտարբեր է ուսուցչի բացատրության նկատմամբ, չի հասկանում, թե ինչու այս կամ այն բառը այդպես պետք է գրել և ոչ այնպես: Նա չի դիմում ուսուցչին, որպեսզի ցույց չտա իր չիմացությունը: Ինչ խոսք նման դեպքում նվազում է աշակերտի հարցասիրությունը, կաշկանդվում նախաձեռնությունը, որից և ծնվում է անտարբերություն առարկայի նկատմամբ: Արդյունքում լինում է այն, որ դանդաղում է լեզվի տիրապետումը, հետևաբար և բառապաշարի ու խոսքի հարստացումը:

Աշակերտի գործուն բառապաշարի հարստացման համար կարևոր նշանակություն ունի նաև նրանց վերացարկումը կարողությունների բարձրացումը քերականական կարգերը դասասելու, տարբերակելու, դրանց վերաբերյալ հասկացությունները ընդլայնելու, արդեն սովորած բառերի մի շարք նրբերանգներն ու փոխաբերական առումները ուսուցանելու միջոցով:

Կարևոր է գեղարվեստական գրականության ընթերցման դերը աշակերտների գործուն բառապաշարի հարստացման գործում: Միջին դպրոցական տարիքի աշակերտները հիմնականում արկածային գրականություն են սիրում: Ուսուցիչը պետք է կարողականա օգտագործել այդ առիթները՝ դաստիարակելով ու զարգացնելով ոչ միայն նրանց բնավորության կայունությունն ու կամքի ուժը, հասարակական ուղղվածությունն ու կոլեկտիվիզմը, այլև բառապաշարն ու խոսքի կուլտուրան:

Աշակերտի բառապաշարի հարստացման համար կարևոր նշանակություն ունի ուղղագրության, բառագիտության և բառակազմության ուսուցումը:

Այսպիսով, բառապաշարի հարստացման գործում կարևոր նշանակություն ունի բառային աշխատանքը, որի տեսակները, ինչպես նաև մեթոդներն ու ձևերը շատ բազմազան են: Դրանցից միջին դասարաններում կարելի է կիրառել՝

- Բառիմաստի մեկնաբանում և ճշտում զանազան բառարանների օգնությամբ
- Բառիմաստի բացահայտում՝ ստուգաբանական և բառակազմական վերլուծության միջոցով
- Բառի ծավալուն, բացատրական բնութագրում

- Առարկայի նկարագրում կամ այլ առարկայի հետ համեմատում
- Կյանքից վերցված օրինակների օգտագործում
- Օտարամուտ, բարբառային բառերի փոխարինում գրական համարժեքներով:
- Բառի բազմիմաստության բացահայտում որոշակի կոնտեքստում
- Բառերի ճիշտ ընտրում բառակապակցությունների մեջ:
- Դարձվածքների իմաստի բացահայտում ծանոթ բառերի կամ համանիշների օգնությամբ
- Գործուն բառապաշարի հարստացում հոմանիշների, հականիշների և նույնանիշների ընտրության միջոցով:
- Բառի նշանակության բացահայտում ածանցները այլ ածանցներով փոխարինելու, խոսքի մասերի փոխանցման և այլ միջոցներով:

Բառային աշխատանքի այս տեսակներից շատերը ունենալով քերականական նյութի ուսուցման նպատակ, հետագայում դառնում են խոսքի զարգացման, հատկապես բառապաշարի հարստացման միջոցներ:

Այսպիսով, աշակերտների բառապաշարի հարստացումը խելացի կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է իմանալ նրանց տարիքային առանձնահատկությունները և բառի յուրացման հոգեբանական հիմունքը, ուսումնասիրել տարրական դասարանների աշակերտների բառապաշարը և այլն, որպես հենք, օգտագործել հետագա աշխատանքներում, բառապաշարի հարստացումը տանել ոչ միայն նոր բառեր սովորեցնելու, այլև արդեն ծանոթ բառերի ու արտահայտությունների իմաստները ճշտելու և ընդլայնելու ճանապարհով, հարստացնել աշակերտների բառապաշարը ոչ միայն հայոց լեզվի ու գրականության, այլ դպրոցական բոլոր առարկաների դասերին, ինչպես նաև մարդկանց հետ հաղորդակցվելու, արտադասարանական զանազան պարապմունքների, էքսկուրսիաների ժամանակ և այլն:

1.2. Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացում

Խոսքի զարգացումը կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունի աշակերտի համար: Լեզուն, մարդկային հաղորդակցման միջոց լինելով հանդերձ, միաժամանակ մտածողության միջոց է: Այստեղից բխում է, որ աշակերտի մտքերը ճիշտ ձևով արտահայտելու, հստակ ձևակերպելու անհրաժեշտությունը ըստ էության միտքը ճիշտ կառուցելու, ճիշտ և հստակ մտածելու պահանջ է: Նշանակում է՝ խոսքի զարգացումն իր շատ կողմերով նպաստում է աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը: Խոսքի զարգացումը նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից[4]:

Երեխան դպրոց է ընդունվում լեզվական որոշակի կարողությամբ՝ նա մայրենի լեզվով խոսում, արտահայտում է իր մտքերը: Բայց դպրոց նոր ընդունված երեխայի բառապաշարը դպրոցական պահանջների տեսակետից սովորաբար բավարար չի լինում, և ուսումնառության հենց սկզբից մեծ ու դժվարին աշխատանք է տարվում խոսքի զարգացման ուղղությամբ[5]: Դեռևս նախաայբբենական շրջանում աշակերտը ծանոթանում է հնչյունին, վանկին, բառին, նախադասությանը: Հետագայում իմանում է, որ խոսքը կարող է լինել արտաքին և ներքին, գրավոր և բանավոր, գրական և ոչ գրական…. Ներքին խոսքից բխում է արտաքին խոսքը, որը դրսևորվում է երկու ձևով՝ բանավոր և գրավոր:

Լինելով միևնույն երևույթի՝ մտածողության դրսևորման տարբեր ձևեր՝ բանավոր և գրավոր խոսքերը գտնվում են փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ: Յուրաքանչյուր լեզվի բանավոր և գրավոր կողմերը կազմում են մեկ միասնություն: Ուստի գրավոր խոսքի հաջողվածությունը կախված է բանավոր խոսքի համակարգվածությունից:

---

[4] Աբրահամյան Ս. Գ., Աշակերտի խոսքի զարգացումը, «Լույս» հր., Երևան, 1973, 23 էջ:
[5] Ազիզյան Բ. Ս., Գրավոր խոսքի ուսուցման իմ փորձից, «Լույս» հր., Երևան, 1987թ. 56 15 էջ:

Գրելը բարդ գործողություն է, որին մասնակցում են լսողական, արտասանական, տեսողական և շարժողական գործոնները [6]: Քանի որ ցածր դասարաններում երեխաները ավելի շատ հենվում են տեսողական մտապատկերների և ոչ թե քերականական կանոնների վրա, ուստի բառային աշխատանքները իրականացվում են ավելի շատ ցուցադրելով, խաղերի միջոցով, որպեսզի աշակերտը տեսնի, գրի, կարդա և մտապահի այդ բառերը: Աշակերտի խոսքի զարգացումը կատարվում է ամեն օր, յուրաքանչյուր դասի ժամանակ: Մաթեմատիկայի դասերին, երբ երեխան խնդիրը կարդալուց հետո պատմում է, հետևում ենք, թե ինչ հաջորդականությամբ է ձևակերպում մտքերը, ինչպես է պայմանը առանձնացնում պահանջից: Ծանոթանում է մաթեմատիկական նոր տերմինների, գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունների բաղադրիչների անվանումներին: Մեծ ուշադրություն ենք դարձնում նաև թվերի ճիշտ արտասանությանը. ոչ թե տաս, այլ՝ տասը, ոչ թե ութանասուն, այլ՝ ութսուն, ոչ թե հարուր, այլ՝ հարյուր:

Կերպարվեստի դասերին երեխաները ծանոթանում են իրենց համար դեռևս անծանոթ նոր բառերի՝ նատյուրմորտ, բնապատկեր, դիմանկար, մանրանկարչություն, որմնանկար, զարդաքանդակ և այլն:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասաժամերին հետևում ենք, որ աշակերտները կարողանան տրամաբանական հաջորդականությամբ հստակ ձևակերպել մտքերը: Օգտագործում ենք տարբեր դիդակտիկ պարագաներ, նոր տեխնոլոգիաներ, պաստառներ, որպեսզի աշակերտները անծանոթ բառերը լավ մտապահեն և կարողանան ճիշտ օգտագործել խոսքի մեջ:

Մայրենիի դասերին բազմատեսակ բառային աշխատանքների շնորհիվ հարստանում է բառապաշարը: Որպեսզի երեխաների համար ձանձրալի, միապաղաղ չլինի, այդ աշխատանքները կատարում ենք տարբեր ձևերով: Կրտսեր տարիքի աշակերտների ուշադրությունն անկայուն և կարճատև է. այս տարիքին բնորոշ է ուշադրության արագ շեղվելը և ձանձրանալը: Ուստի ուսուցիչը պետք է դասի նյութը հագեցնի դիդակտիկ պարագաներով, նորագույն տեխնոլոգիաներով,

[6] Մանուկյան Ա. Ս., Գրավոր աշխատանքների ուսուցման համակարգը, «Լույս» հր., Երևան, 1983թ. էջ 79:

տարատեսակ խաղերով, աշակերտի հետաքրքրությունը շարժող տարբեր միջոցներով:

Այսպես՝ արև բառով բառակապակցություն կազմելիս գործածում ենք համապատասխան երկրաչափական պատկերներ՝ (շրջան, եռանկյուններ) կարևորելով նաև միջառարկայական կապը և աշակերտների համակողմանի զարգացումը: Սկզբում գրատախտակին փակցնում ենք շրջանը, այնուհետև յուրաքանչյուր բառակապակցություն ասելիս ավելացնում ենք եռանկյուններ և ստանում ենք արև: Որքան շատ բառակապակցություններ են կազմում, այնքան շատ են լինում արևի ճառագայթները: Կա՛մ գրատախտակին գծում ենք շրջան, այնուհետև տրված բառով կազմում են բառակապակցություններ, կամ նոր բառեր՝ տրված արմատով:

Յուրքանչյուր բառ կամ բառակապակցություն ասելիս աշակերտները գծում են արևի ուղիղ ճառագայթներ: Հաշվում են ճառագայթների քանակը: Այնուհետև կիրառելով բացատրման մեթոդը՝ ավելացնում ենք աշակերտների համար դեռևս անծանոթ բառեր կամ բառակապակցություններ, որոնք նշում ենք ալիքաձև ճառագայթներով: Երեխաները հաշվում են, թե քանի նոր բառ սովորեցին: Հետո այդ նոր բառերով կազմում են նախադասություններ: Նախադասություններ կազմելիս ուշադրություն ենք դարձնում ոչ միայն մտքին, այլև ենթակայի և ստորոգյալի, համաձայնությանը: Օրինակ՝ «Թռչունների երամը չվում են տաք երկրներ»: Ճիշտ է, երամ բառը ցույց է տալիս թռչունների որոշակի քանակ, բայց բառի ձևը եզակի է: Դրա համար պետք է ասել. «Թռչունների երամը չվում է տաք երկրներ»:

«Աշուն» թեման անցնելիս գրատախտակին փակցնում ենք նկար: Տրված արմատով աշակերտները կազմում են բառեր: Յուրաքանչյուր ասելիս մեկական տերև են փակցնում ծառի ճյուղերին: Ստացված բառերով կազմում են նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության մեկական խնձոր են փակցնում և ստանում են աշնանային բերքառատ ծառ: Կարելի է կատարել նաև այսպիսի աշխատանք որոշակի ուագրութմամբ յուրաքանչյուր դասից ընտրում ենք ուղղագրական բառեր և գրում գրատախտակին, թվարկում ենք նաև այդ ուղղագրությանը վերաբերող բառեր: Գունավոր կպչուն թերթիկների վրա նախապես գրում ենք հոմանիշ բառեր և խառը փակցնում եմ գրատախտակին: Աշակերտները

նայում և, կարդում են բառերը, ընտրում հոմանիշ բառերի զույգեր և թերթիկները փակցնում են իրար կողքի, օրինակ՝ առավոտ – արշալույս: Այնուհետև մտածում են, թե էլ ինչ հոմանիշներ ունի առավոտ բառը երեխաների թվարկած բառերին ավելացնում ենք նոր բառեր և հարստացնում բառապաշարը:

Երկու սյունակներով նախապես խառը գրում ենք հականիշ բառերը, ապա աշակերտները մոտենում են, կարդում, գծով հականիշ զուգերը կապում իրար: Փոձում են իրար հետ կապել բանավոր և գրավոր խոսքերը: Յուրաքանչյուր վերլուծության ժամանակ մեծ ուշադրություն ենք դարձնում աշակերտի ճիշտ, գրագետ ձևակերպմանը, բառերի շեշտադրությանը: Տարատեսակ շարադրություններ գրելը ևս նպաստում է երեխայի մտքի ճկունությանը, մտքերի ճիշտ վերարտադրությանը, պատմողական և նկարագրական խոսքերի ձևավորմանը. շարադրություն՝ նկարի վերաբերյալ, շարադրություն՝ տրված հենակետային բառերի և բառակապակցությունների կիրառմամբ, շարադրություն՝ տրված թեմայի շուրջ, շարադրություն՝ շարունակի՛ր միտքը և այլն: Այս բոլոր գրավոր աշխատանքները նպաստում են կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացմանը: Նոր բառերի պարբերաբար գործածումը շարադրությունների մեջ օգնում է, որ այդ բառերը դառնան աշակերտի բանավոր խոսքի բաղկացուցիչ մասը, հարստացնեն բառապաշարը: Փոխադրությունների և շարադրությունների միջոցով ձևավորվում և զարգանում են աշակերտների ազատ ու անկաշկանդ մտածելու և մտքերը ճիշտ արտահայտելու ունակությունները:

Այսպիսով, պատմողական մեթոդը ևս նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը: Բառապաշարի հարստացումը կապվում է ուսուցման բոլոր գործընթացների հետ՝ գրական ընթերցանություն, խմբային դիտումներ, էքսկուրսիաներ և այլն: Աշակերտի ստեղծագործական մտքի, գեղագիտական ճաշակի, վերլուծական մտածողության, նկարագրական, պատմողական խոսքի զարգացմանը նպաստելու համար կիրառում ենք տարատեսակ միջոցներ, որոնցում ներառված են արվեստի տարբեր ճյուղերը:

Դասական երաժշտության ունկնդրումը ընդգրկված է ստեղծագործական և նկարագրական մտքի զարգացման գործընթացում: Այս կամ այն անվանի երգահանի ստեղծագործությունը լսելուց հետո աշակերտները գրավոր ու բանավոր ձևով

արտահայտում են իրենց մտքերն ու զգացածը: Այսպիսով, նպաստում ենք նաև տվյալ ոլորտին հատուկ բառերի ուսուցմանը, մտապահմանը, կիրառմանը: Քանի որ աշակերտները վաղվա քաղաքացիներն են, ապա սրանից բխում է , որ նրանց խոսքը, խոսքի մշակույթը պետք է զարգանա՝ դառնալով չափանիշ աշակերտի համար: Աշակերտն ապագա ուսուցիչն է, բժիշկը, նախարարը, ինչու չէ, նաև բանվորն ու գործարարը, գյուղացին ու գյուղատնտեսը, և ցանկացած բնագավառում մարդը պետք է ունենա համապատասխան բառապաշար, խոսք կառուցելու մշակույթ: Ինչպես անմահ լոռեցին է ասել. «Բառը մի աշխարհ է», և բառի ճիշտ ու տեղին օգտագործելն ավելի կհարստացնի մարդու խոսքը, բառապաշարը:

1.3. Ըստ ձևի և իմաստի տարբերակված բառերի դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործում

Բառապաշարի ոճաբանական դասակարգման սկզբունքներից մեկը բառային կազմի խմբավորումն է, նրա դասդասումն ըստ նրանց արտահայտած իմաստի ու ձևի: Նշված ելակետով հայերենի (ինչպես նաև մյուս լեզուների) բառապաշարը բաժանվում է չորս խմբի' հոմանիշներ, հականիշներ, համանուններ և հարանուններ:

Անառարկելի է, որ լեզվի՝ ինչպես բառապաշարի, այնպես էլ քերականական միջոցների ոճական հնարավորություններն առաջին հերթին դրսևորվում են հոմանիշության հողի վրա, քանի որ նրանք խոսքին յուրահատուկ պատկերավորություն, արտահայտչականություն և ոճական բազմապիսի երանգավորում հաղորդող լեզվական միավորներ են:

«Հոմանիշությունն այն իրողությունն է, երբ լեզվական տարբեր ձևերում (բառային և քերականական) արտահայտվում է մոտ կամ երբեմն նույնիսկ նույն իմաստը: Այս առումով էլ հոմանիշությունը մի դեպքում բնութագրվում է որպես մոտ իմաստ արտահայտող (մերձիմաստ) լեզվական միավորներ, իսկ մյուս դեպքում միաժամանակ և մոտիկ (մերձակա), և նույնական իմաստ արտահայտող լեզվական իրողություններ» :

Այս իմաստով դիպուկ է նաև ռուս լեզվաբան Ա.Պ.Եվգենևայի հետևյալ սահմանումը, որ վերաբերում է բառային հոմանիշներին. «Հոմանիշներն իրենց իմաստներով մոտիկ կամ նույնական բառեր են, որոնք արտահայտում են միևնույն

հասկացությունը, սակայն միմյանցից տարբերվում են կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական երանգներով, կա՛մ այս երկու հատկանիշներով»:

Հոմանիշների ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է բառային հոմանիշների սահմաններում, (քանի որ և իմաստային մերձությունը, և իմաստային նույնությունն ամենից առաջ նկատելի է և կիրառելի լեզվի բառային մակարդակում: Բառային հոմանիշներն իրենց արտահայտչական, իմաստային, ոճական նրբերանգներով ու կիրառության հաճախականությամբ ոճաբանության ուսումնասիրության կարևորագույն և առանցքային լեզվական միավորներ են և տարրական դասարաններում գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրման համար հիմնական ելակետ:

Քանակական առումով հոմանշային շարքը կազմված է լինում նվազագույնը երկու միավորներից և լինում է եռանդամ ու բազմանդամ:

Հայերենում ավելի տարածված են և գերակշռում են բազմանդամ հոմանշային շարքերը: Կան հոմանշային շարքեր, որոնց մեջ մտնող բաղադրիչ հոմանիշների թիվը անցնում է տասնյակից: Հոմանշային շարքում կարող են լինել լեզվի զարգացման տարբեր փուլերին ու շերտերին պատկանող բառեր, բառակապակցություններ, որոնք ունեն ոճական որոշակի երանգավորում: Հոմանշային շարքում սովորաբար առանձնանում է բառերից մեկը, որը տվյալ դեպքում հասկացությունն արտահայտող հիմնական, ելակետային բառն է, ունի ընդհանուր իմաստ, ոճական առումով չեզոք է, դա հոմանշային շարքի հիմնաբառն է կամ հենաբառը (ինչպես՝ գեղեցիկ, սիրուն, գեղանի, գեղեցկուհի, սիրունիկ, գողտրիկ, (արևմտհ) աղվոր, (բրբ.)խորոտիկ, խորոտիկ-մորոտիկ, թառլան, շարմաղ, շարմաղերես, (մանկ.) պուպուշ, պիպիշ, չքնաղ, չքնաղագեղ, չնաշխարհիկ, չքնաղադեմ, չքնաղատես, չքնաղատիպ, գեղադեմ, գեղատես, գեղապատկեր, սիրունատես, լուսերես, նրբադեմ, բարեգեղ և այլն)[7]:

Սկսած առաջին դասարանից ուսուցիչը աշակերտների ունեցած բառի իմաստային կողմի ընկալման ունակությունը զարգացնելու նպատակով բազմաբնույթ վարժություններ է կատարում ծանոթ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառեր գտնելու ուղղությամբ և այդ բնական է, որովհետև բառային աշխատանք կատարելիս աշակերտները ոչ միայն հասկանում ու

[7] Սուքիասյան Ա. Մ. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, Լույս հր., 263 էջ:

բացատրում են ընթերցած նյութի իրենց համար անծանոթ բառերը, այլև սովորում են դրանք օգտագործել խոսքում կամ դրանցով նախադասություններ կազմել, գտնում՝ այդ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառերը: Երեխաները մեծ հաճույքով լսում են այդ աշխատանքտ, այստեղ է, որ ուսուցիչը իր մանկավարժական վարպետությամբ պետք է ցույց տա հոմանիշ բառերի արտահայտչական ուժը:

Հոմանիշների ուսուցումը կրտսեր դպրոցում ունի գործնական ու ճանաչողական արժեք և գործուն բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է: Աշակերտները պետք է իմանան, օրինակ անխիղճ, անգութ, քարսիրտ, անողոք, դաժան, բիրտ, վայրագ բառերի միջև եղած իմաստային ոչ միայն ընդհանրությունը, այլև կարողանան դրանք գործածել տեղին իմաստային նրբերանգների հաշվառումով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ հոմանիշների գործածության մի այլ կողմ ևս. խոսքը վերաբերում է այն իրողությանը, որ իմաստային միևնույն շարքի հոմանիշները կարող են գործածվել միայն տարբեր բառական միջավայրում, կապակցվել տարբեր բառերի հետ[8]: Օրինակ, հուշիկ, հանդարտ, կամաց, կամացուկ, մեղմ հոմանիշներից յուրաքանչյուրը, մյուսների հետ իմաստային ընդհանրությամբ հանդերձ, ունի նաև կիրառական որոշակի տարբերություն, որը և պետք է բացատրել աշակերտներին:

Հայտնի է, որ համանիշները չեն փոխարինում մեկը մյուսին, այլ օգնում են ճշգրտելու, ավելի պարզ դարձնելու խոսողի մտքերը: Այսպես սուրբ, մաքուր, անարատ բառերից Ս.Կապուտիկյանը «Իմ հայ լեզու» բանաստեղծության մեջ օգտագործել է սուրբ բառը: Այս սուրբը չի կարելի փոխարինել մաքուր, անարատ հոմանիշներով: Փաստորեն դրանց օգնությամբ հասկանում ենք սուրբ բառի իմաստը և պատկերացում կազմում «գանձերով լի գանձատան բանալու» սուրբ լինելու մասին: Տարաբնույթ առաջադրանքների կատարման ճանապարհով աշակերտները համոզվում են, որ չափածո ստեղծագործությունների մեջ փոխադարձ փոխարինելիությունը ոչ միայն անհարմար է ոճական կիրառության տեսակետից, այլև խախտում է բանաստեղծության չափն ու հանգը, խարխլում հեղինակի ոճը:

[8] Աբրահամյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, ԵՊՀ, Երևան, 1973 թ. Լույս հր., 136 էջ:

Շահեկան է, որ աշակերտներն ունենան հոմանիշ բառերի տետր իրենց սովորած, դասագրքերի մեջ հանդիպող հոմանիշները գրելու համար: Հոմանիշների ամեն մի շարքի կամ խմբի մեջ մտնող բառերը նպատակահարմար է գրել ոչ թե այբբենական կարգով, այլ իմաստային, կիրառական յուրահատկության հաշվառման սկզբունքով (հոմանշային շարքով): Ինչպես խնդրել, հայցել, աղաչել, պաղատել, թախանձել, աղերսել: Ճիշտ է, հոմանիշներն ըստ իմաստի ընդգծվածության աստիճանական մեծացման դասավորելը դժվար աշխատանք է, բայց այդ աշխատանքը կարելի է կատարել չորրորդ դասարանում: Հոմանիշների ուսուցմանը անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բոլոր առիթներով թե՛ դասագրքային նյութերի օգտագործման, թե՛ արտադասարանական ընթերցանության, թե՛ աշակերտների գրավոր ու բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքներ անելիս:

Հոմանիշների և առհասարակ բառերի նպատակային գործածության վերաբերյալ կարելի է աշակերտներին տալ տարբեր բնույթի հանձնարարություններ: Օրինակ կարելի է տալ բառերի, այդ թվում հոմանիշների շարք ու հանձնարարել գրել շարադրություն դրանց օգտագործմամբ: Կարելի է առաջադրել նախադասություններ որոշ բառերի բացթողումով և հանձնարարել՝ տրված հոմանիշներից առավել դիպուկներով լրացնել բացթողումները: Կամ տալ տարբեր իմաստ ունեցող բառերի ցանկ և հանձնարարել գտնել դրանց հոմանիշներն ու վերջիններս օգտագործել նախադասություններում:

Երեխաների տրամաբանական մտածողության, վերլուծական-համադրական կարողությունների զարգացմանը մեծապես նպաստում են նաև հոմանիշային շարքերի ուսուցումը: Այս շարքերի ուսուցումից հետո միայն հնարավոր կլինի հոմանիշների իմաստային նրբերանգները ըմբռնել տալը կրտսեր դպրոցում: Հայտնի է, որ հոմանիշները լեզվում հանդես են գալիս իմաստային շարքերով երկանդամից մինչև բազմանդամ կառուցվածքով:

Որպեսզի աշակերտներն ըմբռնեն հոմանշային շարքերի էությունը և ձեռք բերեն դրանց տարբերակման կարողությունները, շահեկան է իրականացնել բառիմաստների հակադրության սկզբունքը: ՈՒսուցիչը պիտք է իմանա (աշակերտներին այս մասին պետք չէ բացատրել), որ հոմանշային շարքի առաջին բառը կոչվում է հիմնաբառ, իսկ շարքի մյուս բառերի իմաստն աստիճանաբար ձեռք է

բերում սաստկական նշանակություն՝ արտահայտելով կամ դրական, կամ բացասական գնահատություն:

Բնագրի վրա տարվող աշխատանքի ժամանակ գրեթե բոլոր ուսուցիչներն ուշադրություն են դարձնում ոչ միայն հոմանիշ, այլև հականիշ բառերի վրա: Հականիշ բառերն իրենց վառ արտահայտչականությամբ, ասելիքի շեշտակիությամբ ու դիպուկությամբ միշտ էլ կենսունակ ոճական միջոց են եղել թե՛ հին, թե՛ միջին և թե նոր դարերի պոեզիայում ու արձակում: Այստեղ, բացի արտահայտչականության ու դիպուկության գործոնից, թերևս դեր ունի նաև սեղմության, համառոտության գործոնը, որը, բնականաբար, նվազ էական հանգամանք չէ:

«Հականիշներն իրենց ընդհանուր տեսակարար կշռով (որակապես, թե քանակապես) զիջում են միայն հոմանիշներին: Հականիշ են կոչվում արտաքին հնչյունական կազմով ձևով տարբեր, իմաստով հակադիր բառերը, ինչպես լավ-վատ, մեծ-փոքր, կարճ-երկար, գիշեր- ցերեկ, սկիզբ-վերջ, լույս-խավար, գնալ-գալ, տանել-բերել, իջնել-բարձրանալ, ծնվել-մեռնել, շուտ-ուշ, արագ-դանդաղ, վեր-վար, ներս-դուրս, այո-ոչ և այլն»:

Բառակազմություն թեման անցնելիս երկրորդ դասարանցիները ծանոթանում են պարզ, բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր բառերի հետ: Չի խանգարում երեխաներին բացատրել նաև, որ հականիշներ կազմվում են բառերի այդ տեսակներին ածանցներ ավելացնելով, ինչպես կեղծ-անկեղծ, մխիթարական-անմխթարական, հյուրասեր-անհյուրասեր, պատասխանատվություն-անպատասխանատվություն և այլն:

Մեր ուսումնասիրությունները ցույց են ավել, որ կրտսեր դպրոցականները խոսքում ավելի շատ օգտագործում են տարարմատ հականիշները, որովհետև հականշային այդ զույգերը կազմելիս առավելագույնս նրանք օգտագործում են իրենց կոնկրետ մտածողությամբ պայմանավորված բառապաշարի առավել ակտիվ բառերը: Սակայն, երբ երկրորդ դասարանում յուրացնում են ժխտական նախածանցներով նոր բառեր կազմելու ձևերը, սկսում են առավելությունը տալ այդ ածանցներն ունեցող բառերով կազմված հականշային զույգերին: Հականշային զույգերի կազմման այդ եղանակը հետագայում այնքան է մատչելի դառնում աշակերտներին, որ հաճախ

ուսուցիչները ստիպված են լինում խնդրել, որ աշակերտները կազմեն տարարմատ հականշային զույգեր (անշուշտ առանց եզրույթի օգտագործման):

Հականիշները ոճական, արտահայտչական բավական մեծ դեր են կատարում լեզվում: Արտացոլելով արտաքին աշխարհի երևույթների, իրողությունների միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները նրանք լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց են և ամենալայն հնարավորություններ են ընձեռում ամենաբազմազան համեմատություններ անելու, տարաբնույթ հակադրություններ ու հակասություններ արտահայտելու, ինչպես նաև խոսքը պատկերավոր, հմայիչ ու ազդեցիկ դարձնելու համար:

Հականիշ բառերի հիմնական գործառույթը հակադրությունների համար իբրև լեզվական միջոց ծառայելն է: Օրինակ՝ «Հետո նա սկսեց նկարել: Վրձինը բարձրանում ու իջնում էր այնպես, որ կարծես նկարչի ձեռքին ոչ թե վրձին էր, այլ մուրճ, և նա ոչ թե նկարում, այլ կոփում էր ծաղիկները»:

Հականիշների շուրջ պարբերաբար կատարվող նման աշխատանքը կզարգեցնի երեխաների տրամաբանական մտածողությունը, կհարստացնի նրանց ակտիվ բառապաշարը, կսովորեցնի կառուցել կապակցված խոսք: Հականիշները արտահայտչական բազմազան դրսևորումներ ունեն: Նրանք գալիս են դարերի խորքից, ժողովրդական լեզվամտածողության լավագույն արտահայտություններ են: Եվ բնավ պատահական չէ, որ նրանք ավելի շատ ու լայնորեն են գործածվում առածներում, ասացվածքներում, հանելուկներում: Դրանք օգտագործված են մայրենիի գործող դասագրքերում, և դասագործընթացում ուսուցիչները լուրջ աշխատանք են տանում դրանցում հականիշների գործածության առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ:

Հանրակրթության տարրական օղակում, աշխատանք է տարվում նաև երեխայի խոսքը համանուն բառերով հարստացնելու ուղղությամբ: Անշուշտ, համանուն եզրույթը դասարանում չի գործածվում, սակայն քանի որ դասագրքի նյութերում աշակերտները հաճախ են հանդիպում համանուն՝ բառերի, ուսուցիչը պարտավոր է որոշակի մակարդակով աշխատանք տանել դրանց բացատրման և խոսքում ճիշտ օգտագործման առումով՝ մասնավորապես շեշտը դնելով խոսքի արտահայտչականության վրա: Այս աշխատանքն իրականացնելիս ուսուցիչը պիտի

իմանա, որ «Համանունները ձևով, իրենց հնչյունական կազմով և արտասանությամբ նույն, բայց իմաստով իրարից տարբեր բառեր են ու քերականական ձևեր:

Համանունության դեպքում նույն են լինում բառի թե՛ արտասանությունը և թե՛ գրությունը: Եթե բառն այդ երկու հատկանիշներից միայն մեկով է նման մյուսին, ուրեմն' համանուն չէ:

ԳԼՈՒԽ 2 ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1.Բառապաշարի հարստացումը հոմանիշների, հականիշների, դարձվածքների միջոցով

Հայտնի է, որ հոմանիշները իրականության միևնույն երևույթները տարբեր կերպ բնութագրող բառերն են: Այնպես շողոքորթ բառի հոմանիշները (քաղցրախոս, կեղծավոր…) արտահայտում են այդ հատկանիշի տարբեր երանգները, աստիճանները, ընդ որում իրարից բավական հեռու իմաստներ:

Տարրական դասարաններում հոմանիշների մասին տեսական գիտելիքներ չեն տրվում: Այն իրականացվում է վարժանքների միջոցով և այդ վարժությունների համակարգը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Նյութում հոմանիշների հայտնաբերում, բնագրում ունեցած նշանակության բացատրում
2. Տվյալ բառի հոմանիշների ընտրություն և նրբությունների բացատրություն
3. Հատուկ վարժություններ հոմանիշների շուրջ
4. Հոմանիշների օգտագործում կապակցված խոսքում
5. Հոմանիշ բառի ճիշտ օգտագործում, բառի փոխարինում այլ տվյալ բնագրին համապատասխան բառով:

Հականիշները-հակառակ իմաստ արտահայտող բառերն են և ստեղծում են հակադրություն:

Այն ակնառու բացատրելու համար իրար կողք ցուցադրվում են, օրինակ. արևոտ և ամպամած օրեր և առաջարկում երեխաներին ներկայացնել նկարները մեկ բառով, իրար կողքի ցուցադրված նկարների հակադրությունը:

Ավելի լավ է ընկալվում հականիշները, երբ այն երեխաները օգտագործում են նախադպրոցական տարիքից: Հականիշների շուրջ տարվող աշխատանքները սկսվում են մայրենի դասագրերում զետեղված բնագրերը ընթերցելուց, որից հետո կատարվում է նաև հատուկ վարժություններ:

1. Բնագրում հանդիպած հատկանիշների ընտրություն

2. Հականիշների ավելի ճշգրիտ զույգերի նախադասության մեջ օգտագործում
3. Նախադասության ամբողջացում հականիշներով
4. Բազմիմաստ բառերին համապատասխան հատկանիշների ընտրություն:

Բառապաշարի հարստացումը դարձվածքների միջոցով

Տարրական դասարաններում դարձվածքներին հատուկ աշխատանք նույնպես նախատեսված չէ: Սակայն նյութերում եղած դարձվածքները պետք է բացատրվեն: Դարձվաձքները փոխաբերությունների բնույթ են կրում, և հենվում են բազմիմաստության, այլաբանության վրա:

Դասագրքերում զետեղված տեղեկատվությունների շուրջ զրույցներ անցկացնելիս պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել դարձվածքներով հարուստ խոսքի վրա և խրախուսել նրանց կողմից դարձվածքների օգտագործումը:

Հայտնի է, որ դարձվածքները հարստացնում են խոսքը, ուժեղացնում են նրա տպավորությունը մտքի արտահայտչականությունը:

Պետք է ուշադրություն դարձնել, որ երեխաները դարձվածքները օգտագործեն ինքնուրույն կառուցած խոսքում:

Աշակերտների խոսքում կարևոր է նաև ասածվածքները: Դրանք մայրենի դասագրքերում զետեղված են հիմնականում նյութերից հետո, որը կապված է նյութի բովանդակության գաղափարի հետ:

Ասացվածքը այստեղ հանդիսանում է նաև բնագրի հակիրճ ամփոփում:

Դպրոցականները պետք է կարողանան ասացվածքները կապեն իրենց կարդացած այլ նյութերի հետ, իրենց կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ և կարողանան բացատրել դրանց այլաբանական իմաստը:

2.2. Բառապաշարի հարստացումը քերականական վարժությունների միջոցով

Խաղ-վարժանքների անցկացման նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանական անցումը՝ տառ-բառ-բառակապակցություն-նախադասություն, ինչպես նաև լուռ ընթերցումից բարձրաձայնին անցնումը:

Վարժանք-առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղեր են, որոնց կատարումը հաճույք կպատճառի աշակերտներին: Առաջարկվող առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի օրվա դասի բառային ֆոնդին, ինչպես նաև նպաստի աշակերտների բառապաշարի զարգացմանը: Առաջադրանքների աստիճանական բովանդակային բարդացումը պայմանավորված է աշակերտների կարդալու կարողությունների զարգացմամբ: Հաշվի առնելով դասարանի աշակերտների ունակությունները՝ ուսուցիչը կարող է դանդաղեցնել կամ արագացնել այդ գործընթացը:

Համապատասխան կարդալու կարողությունների որակական հատկանիշների ձևավորման կարելի է նյութը պայմանականորեն բաժանել փուլերի՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների կարդալու կարողությունների զարգացմանը, կետրադրական կանոնների պահպանմամբ արտահայտիչ ընթերցանության, իմաստի ընկալմանը նպաստող վարժանքներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ, տևողությունը՝ 10 րոպե

- Ի՞նչ է բառը
- Ի՞նչ հատկանիշներ ունի բառը
- Ի՞նչ դեր ունի այն մեր կյանքում
- Ի՞նչ է նշանակում բառի կենսագրություն
- Բառերը կարո՞ղ են հնանալ
- Կարո՞ղ ենք բառերը փոխարինաբար վերցնել այլ լեզուներից:

Իմասի ընկալման փուլ, տևողությունը՝ 25 րոպե:

Գիտենք չէ՞, որ ծառերն ունեն արմատներ և ճյուղեր:

Բառերն էլ ունեն արմատներ և ճյուղեր՝ այ, այսպես.
Նկարին նայելով տեսնում ենք, որ արև արմատից ստացվում է արևային, արևելք, արևաշող, արևոտ բառերը:

Արմատը բառի հիմնական իմաստն արտահատող մասն է, հիմքը: Նրա վրա կառուցվում են այլ բառեր:



Հետևյալ վարժությունների նպատակն է օգնել աշակերտներին յուրացնել թեման.

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է.

Բառերը բաղադրիչների բաժանեք: Արմատներն ինչո՞վ են միանում:

Մարդամոտ, լուսամուտ, ծնողասեր, գորգագործ, փառատոն:

Մարդամոտ- Մարդ-ա-մոտ

Լուսամուտ- Լույս-ա-մուտ

Ծնողասեր- Ծնող-ա-սեր

Գորգագործ- Գորգ-ա-գործ

Փառատոն- Փառ-ա-տոն

Բոլոր բառերը միացված են ա հոդակապով:

Տրված բառերը կազմող մասերն առանձնացրո՛ւ: Արմատներն ընդգծիր:

Գրավոր- գր-ավոր

Ուսուցիչը գատախտակին է փակցնում գծագիրը և աշակերտներին հանձնարարում ածանցների օգնությամբ նոր բառեր կազմել



Այնուհետ ուսուցիչը աշակերտներին բաժանում է խմբերի և հանձնարարում կատարել հետևյալ քարտային աշխատանքը.

1-ին խումբ – տրված բառերին բաղադրիչներ ավելացնելով՝ նոր բառեր ստացեք. Սեր, սիրտ, մայր, տուն, դաշտ, միրգ, խոսք, հյուր, միտք, հիանալ, վազք, միանալ, ջուր: Ընդգծել այն արմատները, որոնք ինքնուրույն չեն գործածվում:

2-րդ խումբ – Տ-աձև աղյուսակի համապատասխան սյունյակներում առանձնացնել բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները, նշել հնչյունափոխությունը . խցկել, ընկուզենի, քաղաքային, փչակ, տետրակ, կրկնավոր, բուժակ, ճոճանակ, բնական, օրրան, երկրային, գրչակ:

3-րդ խումբ - «Հայկ և Բելլ» հատվածից գտնել հնչյունափոխված արմատները, վերականգնել անհնչյունափոխ ձևերը:

4-րդ խումբ – Կազմել բառափնջեր մեծ, տես, բախտ բառերից:

5-րդ խումբ – Բառակապակցությունների իմաստն արտահայտել մեկ բառով: Հողից ծնված, ձայն սփռող, քարով շինված, կավով ծեփված, ճյուղերը կոտրված, ձու ուտող, մատյան գրող, հույսը հատած, լույսով վառված, առյուծի սիրտ ունեցող:

Հաջորդ վարժանքը հետևյալն է.

Ուսուցիչը նկարի փակցնելով գրատախտակին հանձնարարում է տվյալ բառակապակցությունները իմաստային առումով վերածեն բառի.



Կշռադատման փուլ, ամփոփում, տևողությունը՝ 5 րոպե:

Ուսուցիչը ամփոփում է դասը, կատարում գնահատում, և հանձնարարում տնային առաջադրանք:

2.3. Դասի պլան

Դասարան- 4- րդ

Առարկա- մայրենի

Թեմա- «Չնվաճված աշխարհամաս», Վ. Իսրայելյան

Դասի տևողությունը՝ 45ր

Դասի նպատակը՝

- Զարգացնել երևակայական մտածողություն և ստեղծագործական կարողությունները
- Սովորեցնել դատողություններ անել բնագրի հիմնական գաղափարի շուրջ:
- Մեկնաբանել հերոսների գործողությունների դրդապատճառները:
- Կարողանալ վերլուծություն կատարել՝ քննարկման, մեկնաբանման, ընկալման միջոցոցով:
- Կարողանալ բանավիճել՝ փաստարկներ ու հիմնավորումներ ներկայացնել:
- Կատարել քերականական աշխատանքներ:

Դասի անհրաժեշտ պարագաներ՝ գիրք,տետր, նկարներ,կպչուն թղթեր,գունավոր նշագրիչներ

Դասի կահավորումը՝

- Հայաստանի քարտեզ
- Պատմական Հայաստանի քարտեզ
- Նորարարական տեխնոլոգիաներ (համակարգիչ, պրոյեկտոր)

Կիրառվող մեթոդները՝ մտագրոհ, խմբային աշխատանք, խմբավորում, վերլուծություն, խաղ վարժանքներ

Խաղ-վարժանքների անցկացման նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների պարզեցմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանական անցումը՝ տառ-

բառակապակցություն-նախադասություն, և լուռ ընթերցումից բարձրաձայնին անցումը:

Վարժանք-առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղեր են, որոնց կատարումը հաճույք կպատճառի աշակերտներին: Առաջարկվող առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի դասի բառային ֆոնդին, ինչպես նաև նպաստի աշակերտների բառապաշարի զարգացմանը: Առաջադրանքների աստիճանական բովանդակային բարդացումը պայմանավորված է աշակերտների կարդալու կարողությունների զարգացմամբ: Հաշվի առնելով դասարանի աշակերտների ունակությունները՝ուսուցիչը կարող է դանդաղեցնել կամ արագացնել այդ գործընթացը:

Համապատասխան կարդալու կարողությունների որակական հատկանիշների ձևավորման կարելի է նյութը պայմանականորեն բաժանել փուլերի՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների կարդալու կարողությունների զարգացմանը, կետադրական կանոնների պահպանմամբ արտահայտիչ ընթերցանության, իմաստի ընկալմանը նպաստող վարժանքներ:

Չափորոշիչներ՝

- Լեզվական աշխատանքի միջոցով կամրակայեն բառակազմական գիտելիքները,
- Կնկարագրեն ստեղծագործության հերոսներին՝օգտագործելով նաև տեքստի բառերն ու արտահայտությունները,
- Գրավոր և բանավոր կնկարագրեն մարդկանց, նրանց ապրումներն ու փոխհարաբերությունները:

Դասի ընթացքը՝

Դասը կառուցված է «քննադատական մտածողության» 3 փուլից՝խթանում, իմաստի ընկալում և կշռադատում կամ ԽԻԿ համակարգով: Որպես դասամուտք ընտրել ենք հեղինակային մաղթանքը և արտասանել.

«Հայի քո տեսակը մեր հաղթանակների պտուղն է՝ ուսումնատենչ, ինքնավստահ և հավատավոր: Հպա՛րտ նայիր աշխարհին»:

Խթանում

Կիրառել «Անավարտ նախադասություն» մեթոդական հնարը: Այսպես. ուսուցիչը գրատախտակին գրում է հետևյալ անավարտ նախադասությունը. «Կյանքում հարազատ ու թանկ բաներ կան, որոնք չես կարող կորցնել, եթե…»: Ապա նախ անցկացնում ենք զրույց այն մասին, թե աշակերտներն ինչն են առավել հարազատ ու թանկ համարում… Աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքը և հիմնավորում:

Նրանց թվարկածները գրառվում են գրատախտակին: Եթե թվարկվածների մեջ չլինի «հայրենի տուն», «ծննդավայր» հասկացությունները, ապա մենք համապատասխան հարցադրումներով ուղղորդում ենք աշակերտներին, որ հարազատ ու թանկ բաների շարքում անպայման տեղ գտնեն «հայրենի տուն», «ծննդավայր» հասկացությունները: Այդ հասկացությունների առնչությամբ վարվող զրույցի մոտավոր բովանդակությունը կարող է լինել այսպիսին.

- Հայրենի տունը մեր հայրենիքն է, մեր ծննդավայրը, մեր ծնողները, մեր հողն ու ջուրը, մեր նախնիները, մեր պատմությունը: Հայրենի տունը մեր մանկությունն է: Հայրենիքն ու հայրենասիրությունն սկսվում են հայրենի տնից: Հայրենի տունը մեզ համար նույնքան հարազատ ու քաղցր է, որքան մեր ծնողները: Իսկ հայրենի տունը չես կորցնի, եթե…(լսել երեխաների պատասխանները): Այժմ կկարդանք մի պատմվածք և տեսնենք, թե այս պատմվածքի հերոսների համար ինչն է առավել հարազատ ու թանկ այս կյանքում...

Կարելի է ցուցադրել ՀՀ քարտեզը և պատմական Հայաստանի քարտեզը որը եղել է «ծովից ծով Հայաստան» և տարիների ընթացքում զավթվելով թշնամու

կողմից դարձել է «մի բուռ Հայաստան»:

Նկար 1. Պատմական Հայաստանի քարտեզ

Նկար 2. ՀՀ քարտեզ

Իմաստի ընկալում

Մենք առաջադրում ենք ընթերցել վերնագիրը և մեկնաբանել «չնվաճված» և «աշխարհամաս» հասկացությունները.

- «Չնվաճված» նշանակում է չզավթված, չգրավված, իսկ «աշխարհամասը» ցամաքի տարածք է, որն ընդգրկում է մայրցամաքներ կամ նրանց մեծ մասը՝ դրանց շրջապատող կղզիների հետ:

Այնուհետև մենք հարցնում է.«Ի՞նչ աշխարհամասեր գիտեք: Ի՞նչ եք կարծում՝ հեղինակը ո՞ր աշխարհամասն է անվանում չնվաճված,ինչու՞…»:

Երեխաների պատասխանները կարող են տարբեր լինել: Մենք չպետք է մեկնաբանենք կամ ուղղորդող վերաբերմունք դրսևորենք:

Տեքստի առաջին հատվածի լուռ ընթերցում՝ առաջադրանքով

Մտքում դանդաղ կարդացե՛ք առաջին հատվածը, փորձելով պարզել ձեզ հետաքրքրող հարցի պատասխանը:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ առաջին հատվածի նախնական ընկալումը պարզելու նպատակով

Հարցեր

- Ե՞րբ էր Հակոբիկն զգում, որ պապը խոսելու կարիք ունի:
- Ըստ հեղինակի՝ ինչո՞ւ էր Արշակ պապն ուրիշ:
- Ի՞նչ իմացար՝ ինչն էր Արշակ պապը համարում չնվաճված աշխարհամաս:

Տեքստի երկրորդ հատվածի լուռ ընթերցում՝ առաջադրանքներով

Մտքում դանդաղ, ուշադիր կարդացե՛ք երկրորդ մասը՝ պատասխանելու հարցին.«Ում է պապը համարում չնվաճված աշխարհամասի բնակիչ»:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ երկրորդ հատվածի նախնական ընկալումը պարզելու նպատակով

- Պապն ուզում էր, որ ինչպիսի՞ տուն նկարեր Հակոբիկը:

- Ինչ իմացար՝ ու՞մ էր պապը համարում չնվաճված աշխարհամասի բնակիչ:

Տեքստի բարձրաձայն ընթերցում

Կարելի է տեքստի բարձրաձայն ընթերցումը կազմակերպել մեկնաբանություններով՝«զրույց հեղինակի հետ» մեթոդի կիրառմամբ և զուգահեռ իրականացնել բառային աշխատանք (անծանոթ բառերի իմաստների ճշգրտում և բացատրություն. **մամ, ըմբոստացած, շեն, սալ, շիկացած, հարդախառն, երկանք**):

Հարցեր

- «Գնում էր ու կատվի պես կծկվում ոտքերի մոտ» նախադասության մեջ ո՞ր բառով կարելի է փոխարինել «**կծկվում**» բառը: Ի՞նչ իմաստով է գործածված այն տեքստի նշված նախադասությունում (Մարդն ուրախությունից ժպտում է, ծիծաղում, թռչկոտում: Ինչ է անում, երբ ցուրտ է, ցավում է ինչ-որ տեղը, տհաճ անակնկալի է հանդիպում, վախենում է, վատ դրամադրություն է ունենում, ընկճված է լինում: Ճիշտ է՝կծկվում է: Իսկ կծկվել բառացի նշանակում է կծիկ դառնալ: Իսկ կծիկը հավասար փաթաթած և գունդ կազմած թելն է կամ գնդի նման փաթաթած որևէ բան: Գունդուկծիկ դառնալ՝ինքն իր վրա փաթաթվելով, կուչ գալով՝կծիկ, գունդ կազմել): Իսկ ինչ տրամադրություն է հուշում «կատվի պես կծկվել» արտահայտությունը(փաղաքշանքի, զգվելու, մտերմիկ զրույցի պատրաստվելու տրամադրություն):
- Ո՞րն է մոլորված բառի իմաստը(շեղված, ճանապարհը կորցրած, սխալված, շվարած): Իսկ ինչ իմաստով է այդ բառն օգտագործված «Լեռների մեջ մի մոլորված գյուղ է լինում» նախադասության մեջ (հեռու, միայնակ, ոչնչով աչքի չնկնող):
- Ծանոթացի'ր շեն բառի մի քանի իմաստներին՝մարդաբնակ, բարեկարգ, բարեկեցիք, լիքը, գյուղակ, կանգուն, առատ, հարուստ: Տեքստի շեն տուն արտահայտության մեջ շեն բառը, որ բառով կփոխարինեիր: Վերընթերցեք պատմվածքի այդ հատվածը և լրացրեք ձեր պատկերացմամբ:
- Ի՞նչ է նշանակում՝«- Ով-ով, բայց պապն ու թոռն միմյանց հասկանում էին » նախադասության իմաստը (նախադասությունը պատմվածքի ենթատեքստի բանալին է : Այդ մտերմիկ հարաբերություններից ու անմիջական

հաղորդակցումներից վերածնվում է անցյալը և հպարտությամբ պարուրում պապի հոգին: Եվ նա բավարարված է զգում իրեն, որ կարող է փոխանցել իր ավանդները, և կապրի, կհարատևի իր սերունդը):

Զրույց Տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով

Զրույցի մոտավոր բովանդակությունը.

- Վերընթերցի'ր այն տողերը, որոնք հաստատում են այս միտքը. «Ով-ով, բայց պապն ու թոռն իրար հասկանում էին»:
- Ի՞նչ ես կարծում՝ Արշակ պապն իրոք մեկ հեքիաթ գիտեր:
- Ո՞րն էր Արշակ պապի միակ հեքիաթը:
- Ինչո՞ւ էր ըմբոստանում Հակոբիկը:
- Ինչու՞ էր հուզվում պապը:
- Արշակ պապը ինչու՞ տունն անվանեց աշխարհամաս, այն էլ չնվաճված (գյուղը, իր տունն անջնջելի հուշ է թողել պապի հիշողության մեջ, քանի որ իր ծննդավայրն է, հատկապես աշխարհամասի արժողությամբ ամենասիրուն, ամենաիսկական, միայն քե'զ սիրելի, ոչ ոք այն քեզանից խլել, նվաճել չի կարող, ինչ ճակատագիր էլ ունենա):
- Հակոբիկն ինչու՞ հավատաց պապին, որ կա այդպիսի աշխարհամաս:
- Ինչու՞ էր Արշակ պապը գորովանքով դիտում թոռանն ու հրճվում:
- Արշակ պապն ինչու՞ Հակոբիկին Չնվաճված աշխարհամասի բնակիչ համարեց:
- Ինչու՞ չէին համընկնում պապի և թոռան պատկերացումները տան և աշխարհամասի մասին:
- Պապն ինչպիսի՞ տուն էր ուզում որ Հակոբիկը նկարի:
- Պատմվածքն սկսվում և ավարտվում է նույն նախադասությամբ: Քեզ համոզե՞ց այդ միտքը: Հիմնավորի'ր:



Տեքստի արտահայտիչ ընթերցանություն՝ կարդալու որակական բոլոր հատկանիշների պահպանումով

Արտահայտիչ ընթերցանության կարողությունների զարգացման նպատակով կարելի է կատարել հետևյալ աշխատանքները.

- Գտեք այն տողերը, որտեղ պապը ներկայացնում է հեռվում թողած տան նկատմամբ իր կարոտը: Ընթերցե՛ք դրանք համապատասխան հնչերանգով:
- Մեկնաբանե՛ք պապի և Հակոբիկի՝ նրանց մտքին և արարքներին համապատասխանող խոսքերի հնչերանգները:
- Ձեր ընտրությամբ ընթերցե՛ք տեքստից մի հատված և այն ավելի արտահայտիչ դարձնելու համար ընտրե՛ք համապատասխան շարժումներ և դիմախաղ:
- Հիշի՛ր՝ պապն ինչ հնչերանգով ասաց « Հակոբի՛կ, դու Չնվաճված աշխարհամասի բնակիչ ես» խոսքերը: Կարդա՛ այդ խոսքերը հենց այդպես:
- Բաժանվե՛ք 3 հոգանոց խմբերի: Խմբում բաշխե՛ք դերերը և ընթերցեք տեքստը: Ձեր ընթերցանությամբ արտահայտելով տեքստի «տրամաբանությունը»:

Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

Կազմակերպում ենք «Բառքամոցի» խաղը, որը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, օգնում է արագ կողմնորոշվելուն, սեր է արթնացնում լեզվի նկատմամբ, արթնացնում առողջ մրցակցային ոգի: Երեխաները բաժանվում են խմբերի: Նախ գտնում են, թե տեքստի որ բառից են «քամված» հետևյալ բառերը. Հարս, համ, շահամաս, մարխ, աշխարհ: Ապա այդ բառից «քամում» են նոր բառեր: Արդյունքում հաղթում է այն խումբը, որը շատ բառեր է «քամել» այդ բառից:

Ստեղծագործական աշխատանքներ

Կարևոր է ստեղծագործական աշխատանքի միջոցով վերհանել մարդկային հույզերն ու զգացումները, նվիրական արժեքները, փոխհարաբերությունները:

Ստեղծագործական առաջադրանքներ.

- Պատմի՛ր տեքստի բովանդակությունն այնպես, ասես դու ես Հակոբիկը :

- Առանձնացրեք պապի «հեքիաթին» վերաբերող հատվածները: Վերնագրիր այն և շարունակի՛ր:
- Նկարի՛ր հայրենիքը, ծննդավայրը, տունը, ընտանիքը և այլն, այսինքն այն ամենը, ինչը հարազատ է քեզ և պատմիր նկարիդ բովանդակությունը:
- Ինչ զգացողություններ ունեցաք: Շարունակեք նախադասությունը. **Ես զգացի…**
- Կա տեքստում այնպիսի մի բան, որ ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:
- Որն է քո «Չնվաճված աշխարհամասը» (Հայաստանը):
- Բոլորի համար չնվաճված աշխարհամասը ծննդավայրն է, մեզ համար էլ «չնվաճված աշխարհամասը» մեր հայրենի քաղաքն է, գյուղը, հայրենիքը:

Առաջադրաքներ ինքնուրույն աշխատանքների համար

«Ինքնուրույն աշխատանք» պաստառի վրա փակցվում են տարամակարդակ առաջադրանքներ.

- Գտի՛ր **աշխարհամաս, արտասվախառն, հարդախառն, ամենասիրուն** բառերի բաղադրիչները:
- Այդ արմատներով կազմի՛ր այլ բառեր:
- Այդ արմատներով կազմի՛ր այլ բարդ կամ ածանցավոր բառեր:


ներաշխարհ
հուզաշխարհ
աշխարհամա
բնաշխարհ
Աշխարհ



Կարելի է կիրառել նաև «Վենի տրամագիր» մեթոդական հնարը՝ հետևյալ հանձնարարությամբ.

- Հիշի՛ր Հովաննես Թումանյանի «Ամենից լավ տունը»: Կիրառելով «Վենի դիագրամա» մեթոդական հնարը՝ խրճիթը համեմատի՛ր պապի «շեն տան» հետ:



Առաջադրել գրել Էսսե(փոքրիկ շարադրություն), թե ինչ հասկացան՝որ դեպքում կարելի է կիրառել «շեն տուն» հասկացությունը:

Ամփոփում

- Գրատախտակին փակցնել պաստառ «Իմ չնվաճված աշխարհամասը» վերնագրով և հանձնարարել կպչուն թղթերի վրա բնութգրող բառեր գրել Հայաստան աշխարհի վերաբերյալ, հիշել հայրենիքի հերոսներին, հակիրճ ներկայացնել, թե ինչ են արել նրանք մեր հայրենիքն անառիկ ու շեն պահելու համար: Ապա ներկայացնելով այդ գրառումները՝կպչուն թղթերը փակցնել պաստառի վրա:



Տնային հանձնարարություն

Դասը սովորել կարդալ, գաղափարական բովանդակության վերհանում, «Հրաշք տետրում» գրել Ձեր նախնիների մասին, թե որ գավառից են:

Գնահատում

Գնահատում ենք ամբողջ դասարանին խրախուսման կարգով և հինգ աշակերտի գնահատականով:

Եզրակացություն

- Ամեն մի լեզու ունի իր բառերը, որոնց թիվը կարող է հասնել մի քանի հարյուր հազարի: Դրանց ամբողջությունը տվյալ լեզվի բառապաշարն է: Հայերենը, օրինակ, ունի ավելի քան 300 հազար բառ: Այդ բառերը հավասար արժեք և միանման գործածություն չունեն: Կան համեմատաբար հաճախ և հազվադեպ գործածվող բառեր: Տվյալ լեզվի բոլոր բառերի ամբողջությունը կոչվում է բառապաշարային կազմ կամ լեզվի բառային կազմ:
- Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Ամեն անհատ միջին հաշվով գիտի, հասկանում է 20-25 հազար բառ և գործածում է դրանցից 3-4 հազարը: Բայց բոլոր մարդիկ նույն բառերը չէ, որ գիտեն և գործածում են: Մոտ 2000 բառ բոլորի բառապաշարում համընկնում է: Մնացածը տարբեր է լինում թե՛ քանակով, թե՛ կազմով՝ կախված մարդու մտավոր զարգացման մակարդակից, կրթությունից, զբաղմունքից, հետաքրքրություններից, միջավայրից ու շփումներից: Մեկ մարդու իմացած և գործածված բառերի ամբողջությունը կոչվում է տվյալ անհատի բառապաշար:
- Բառապաշարը լինում է ակտիվ և պասիվ: Ակտիվ բառապաշարը ներառում է այն բառերը, որոնք օգտագործվում են տվյալ մարդու կողմից իր առօրյա կյանքում իր ամենօրյա պահանջմունքները բավարարելու համար: Իսկ պասիվ բառապաշարը կազմում են այն բառերը, որոնք մենք հասկանում ենք, երբ լսում կամ կարդում ենք, բայց չենք կիրառում մեր առօրյա կյանքում: Այս վերաբերվում է ինչպես մայրենի լեզվով խոսողներին, այնպես էլ սովորողներին: Կան բազմաթիվ բառեր որոնք պարբերաբար օգտագործվում են թե՝ գրելուց և թե՝ խոսելիս: Այսպիսի բառերը մեր ակտիվ բառապաշարն են կազմում, իսկ այն բառերը որոնք մենք լսում ենք հեռուստացույցով կամ մեկ այլ վայրում և չենք կիրառում այն, համարվում է պասիվ բառապաշար: Կարելի է նշել, որ կարևորագույն խնդիր է այն միջոցների մշակումը, որոնք կհեշտացնեն լեզվի ուսուցումը:
- Բառապաշարը կարող ենք դիտարկել հետևյալ դիագրամով.



- Աշակերտը պետք է հասկանա բառը և կարողանա օգտագործել այն: Մենք պետք է սկսենք բացատրելուց և հետո անցնել այն կիրառելուն: Ահա և ճիշտ ձևը: Օրինակ, աշակերտը սովորում է բառը, ամենալավ ձևը, որ կարող ենք ստուգել բառի իմաստը՝ բառարանի գործածումն է: Այսպիսով գտնելով այն բառարանում փորձում ենք կիրառել այն բառակապակցության մեջ:
- Այնուհետև գործածում ենք այն նախադասության մեջ, իսկ ամենավերջում կիրառում ենք այն վարժությունների մեջ կամ խաղերի միջոցով փորձում ենք ավելի

  ամրապնդել սովորած բառը: Սակայն բառապաշարի ուսումնասիրության մեջ
- հաճախ օգտագործվում են բազմաթիվ սխալներ.
- Սովորել միայն քննությունը լավ հանձնելու, միայն արդյունքի համար: Օրինակ աշակերտը հաճախում է հայերենի ուսուցման դասերի և սովորում է մի շարք բառեր: Սովորելով դրանք քննությունը լավ հանձնելու համար՝ արդյունավետ չէ, իսկ եթե աշակերտները սովորում են այն որպես գիտելիք հետագայում այն նաև խոսքում կիրառելու նպատակով: Այսպիսով մեր նպատակը պետք է կենտրոնացված լինի,ոչ թե քննության արդյունքի վրա, այլ իրական գիտելիքի և բառապաշարի զարգացման համար:
- Սովորում են բառը առանց նրա գործածության, այսինքն սովորելով բառը գրում են այն Ձեր նոթատետրում 10 անգամ, արտաբերում եք 20 անգամ և թվում է նրանք փայլուն գիտեք այն, բայց աշակերտները չօգտագործելով այն

չեք կարողանա օգտագործել այն խոսքում: Կարելի է նշել որ ոչ արդյունավետ է սովորել բառերը, բայց չօգտագործել և չկիրառել լեզվի մեջ:

- Գործածել բառը առանց լիարժեք հասկանալու այն: Կարելի է ասել, որ շատ քչերն են կարողանում գործածել նոր, անծանոթ բառերը խոսքի մեջ, սակայն մեծամասնությունը չի կարող այս կերպ սովորել բառերը:
- Ուսուցիչների մեծ մասը չի աշխատում աշակերտների մեջ տեքստի բովանդակության վերարտադրության կարողության ձևավորման ուղղությամբ: Հաճախ դասի վերջում՝ զանգից քիչ առաջ, անգամ դասամիջոցին, կարելի է լսել այսպիսի հանձնարարություն. «Տանը դասը կսովորեք պատմել»: Անմիջապես հարց է ծագում՝ ինչպե՞ս, ո՞վ պետք է սովորեցնի կամ արդյո՞ք նա ցանկանում կամ հասկանում է դրա անհրաժեշտությունը: Արդյունքում՝ երեխան դպրոց է գալիս անպատրաստ, առավել պարտաճանաչները՝ տեքստն անգիր արած: Նման մոտեցման դեպքում հասկանալի է երեխաների աղքատիկ բառապաշարը, կապակցված խոսք կազմելու դժվարությունը, ինքնարտահայտման անկարողությունը և մի շարք այլ անցանկալի հետևանքներ:
- Հասարակությունը միշտ էլ ուսուցչին առաջադրել և առաջադրելու է ամենաբարձր պահանջներ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի կատարելագործումը դպրոցում ուղղակիորեն կախված է ուսուցչի պատրաստվածության մակարդակից: Մանկավարժի մասնագիտական զարգացման անհրաժեշտ նախապայման է ինքնակրթությունը: Հարց է ծագում. ինչպիսի՞ն է իրավիճակը դպրոցներում. ինչքանո՞վ են ուսուցիչները զբաղվում ինքնակրթությամբ, իրենց մասնագիտական աճի պահանջմունքը բավարարելով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, ԵՊՀ, Երևան, 1973 թ. 371 էջ:
2. Աբրահամյան Ս. Գ., Աշակերտի խոսքի զարգացումը, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1973թ., Լույս հր., 567 էջ:
3. Ազիզյան Բ. Ս., Գրավոր խոսքի ուսուցման իմ փորձից, «Լույս» հր, Երևան, 1987թ. 369 էջ:
4. Աղայան Է. Բ., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություն, Երևան, 1974, Լույս հր., 354էջ:
5. Աղայան Է. Բ., Լեզվականության ներածություն, Երևան,1963,ԵՊՀ հր., 364էջ
6. Բահաթրյան Ա. Ընթերցարանը և նորա նշան. գիրք 2-րդ, Երևան 1961, ԵՊՀ հր., 371 էջ:
7. Ղարիբյան Ա. Հայ մանկավարժական լեզվաբանության հարցեր, Երևան, 1969, ԳԱԱ հր., 567 էջ:
8. Մանդինյան Ա., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար, Թիֆլիս, 1876, 647 էջ:
9. Մանուկյան Ա. Ս., Գրավոր աշխատանքների ուսուցման համակարգը, «Լույս» հր, Երևան, 1983թ., 435 էջ:
10. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Եր. 1946, Լույս հր., 361 էջ:
11. Սուքիասյան Ա. Մ. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, Լույս հր.,263 էջ:
12. Баранов М. Т. Повышение эффективности славарной работы Пути созершенстаоания преподавания русского языка в 5-8 классаь, М.1962, стр 159

Համացանցային աղբյուրներ

13. https://docplayer.ru /հասանելի է 2019 թականից/: